02 Շաբաթաթերթ

Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

Տպագրվում է 1990 թվականից

49 (1398) • 21 դեկտեմբերի 2018 թ. • Գինը՝ 150 դրամ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

ՀՀ ոստիկանության պատվիրակության այցը Վրաստան

Դեկտեմբերի 17-ից 19-ը պաշտոնական այցով Վրաստանում էր ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանի գլխավորած պատվիրակությունը:

Դեկտեմբերի 18-ին Վրաստանի ներքին գործերի նախարարությունում Հայաստանի ոստիկանության պատվիրակությանն ընդունեց նախարար Գեորգի Գախարիան: Երկու երկրների իրավապահ կառույցների ղեկավարների առանձնազրույցին հաջորդեց Հայաստանի ոստիկանության եւ Վրաստանի ՆԳ նախարարության ներկայացուցիչների ընդլայնված նիստը:

Վրաստանի ՆԳ նախարար Գեորգի Գախարիան կարեւորեց Հայաստանի պատվիրակության այցը՝ ընդգծելով, որ մեծ պատիվ է հայ գործընկերների հետ համատեղ պայքարել ժամանակակից մարտահրավերների դեմ՝ հանուն երկու երկրների ապահովության ու քաղաքացիների անվտանգության:

ՀՀ ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանը շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ կարեւորեց հատկապես վերջին տարիների սերտ համագործակցությունն ու գործընկերային հարաբերությունների արդյունքները: Հանցավորությունը չունի ազգություն ու սահմաններ, ընդգծեց Հայաստանի ոստիկանության պետը, եւ մեր իրավապահ կառույցների գործընկերության վաղեմի ու հարուստ փորձը վկայում է, որ միայն համատեղ ջանքերով է հնարավոր համարժեք հակազդել հանցավորության արդի մարտահրավերներին՝ արդարացնելով այն ակնկալիքները, որ իրավապահներից ունի հասարակությունը:

Հայաստանի եւ Վրաստանի իրավապահ կառույցների ներկայացուցիչների համատեղ նիստում քննարկվեց փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող եւ փոխգործակցության խորացմանն ուղղված հարցերի լայն շրջանակ:

էջ 2

Ռեւանգողները հայտնաբերվեցին

Դեկտեմբերի 15-ին Երեւանի 23-ամյա մի բնակիչ ոստիկանության Արաբկիրի բաժնում հաղորդում էր տվել, որ դեկտեմբերի 12-ին Ադոնցի 15 հասցեից, բռնություն գործադրելով, «Մերսեդես»-ով իրեն առեւանգել եւ տեղափոխել են Քանաքեռ ՀԷԿ-ում գտնվող մի առանձնատուն, որտեղ մի քանի հոգով ծեծել են՝ պատճառելով մարմնական վնասվածքներ: Ոմն Գոռը՝ ատրճանակով, իսկ Կարենը՝ դանակով սպանության սպառնալիքներ են հնչեցրել: Կարենը կոտրել է նաեւ իր բջջային հեռախոսը:

Ոստիկանության Արաբկիրի բաժնի քրեական հետախույզները պարզել են, որ երիտասարդին առեւանգել են 39-ամյա Սարգիս Մ.-ն, 35-ամյա Գոռ Հ.-ն, 28-ամյա Արմեն Մ.-ն եւ 38-ամյա Կարեն Ձ.-ն: Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ դեկտեմբերի 16-ին նրանք հայտնաբերվել եւ բերման են ենթարկվել ոստիկանության Արաբկիրի բաժին:

Հարուցվել է քրեական գործ:

Թմրանյութ՝ գպահանջ

Թմրանյութի տեւական օգտագործումից առողջությունը քայքայածները, թերեւս, գիտեն, որ թմրամոլությունը դանդաղ ինքնասպանություն է: Բայց կախվածությունը ստիպում է նրանց գիտակցաբար խախտել օրենքը... իրենց առողջության հաշվին: Ու եթե նույնիսկ հնարավորություն չունեն թմրանյութն անձամբ ձեռք բերել, ասենք՝ ազատազրկման մեջ են, ապա գտնում են մեկին, որը պարտավորվում է ամեն գնով իրենց հասցնել մահվան մոտեցնող թույնը:

Որպես կանոն, թմրանյութը դատապարտյալ հասցեատիրոջը հասնում է սննդամթերքի, հագուստի, ծխախոտի, հիգիենայի պարագաների մեջ խնամքով թաքցված: Թմրանյութ առաքողները գուցե չգիտեն, որ քրեորեն դատապարտելի արարք են կատարում. սա այլ թեմա է, բայց բռնվելուց հետո հավաստիացնում են, թե տեղյակ չեն եղել, որ հանձնուքում թմրանյութ կա. սա պարզելն արդեն քննության գործն է:

էջ 7

Տասմիլիոնանոց գողոն

Դեկտեմբերի լույս 10-ի գիշերը մի քանի երիտասարդ լինգի գործադրմամբ բացել էին մայրաքաղաքի Աբովյան փողոցի հագուստի եւ այլ իրերի խանութի դուռն ու մտել ներս: Գողացված ապրանքը, որ 10 միլիոն դրամ արժողության էր, տարել էին մոտակա շենքի հետնամաս:

Խանութի անվտանգության ձայնազդանշանային համակարգը միացել էր: Տնօրենն էլ, արագ կողմնորոշվելով, ահազանգել էր ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն: Ահազանգը փոխանցվել էր ոչ միայն ոստիկանության Կենտրոնական բաժին, այլեւ Կենտրոնում ծառայություն իրականացնող պարեկային ոստիկանների կարգախմբերին:

Դեպքի վայր մեկնած ոստիկաններին տեսնելով՝ երիտասարդները, թողնելով հափշտակած իրերը, փախել էին տարբեր ուղղություններով: Նրանցից մեկին՝ Արտաշատի բնակիչ, 20-ամյա Թաթուլ Մանուկյանին, ոստիկանները բռնել էին Բայրոնի փողոցում ու բերման ենթարկել: Նրան մեղադրանք առաջադրվեց. խափանման միջոցը՝ կալանք:

Շենքի հետնամասում կատարված զննությամբ իրավապահները հայտնաբերեցին խանութից հափշտակված իրերը:

Ոստիկանների արագ արձագանքման շնորհիվ երիտասարդները հանցագործությունն ավարտին չհասցրին: Ձեռնարկվում են միջոցառումներ՝ հանցագործության մասնակից մյուս անձանց ինքնությունը պարզելու, նրանց հայտնաբերելու ուղղությամբ:

Դանակահարություն Ոսկեվազում

Դեկտեմբերի 14-ին հիվանդանոցից ոստիկանության Աշտարակի բաժին ահազանգ հնչեց: Հիվանդանոց էր տեղափոխվել Ոսկեվազ գյուղի 34-ամյա մի բնակիչ՝ դանակահարված:

Հիվանդանոց մեկնած Աշտարակի ոստիկանները բուժհաստատությունից շարժվեցին Ոսկեվազ գյուղ: Դեպքը հենց այնտեղ էր կատարվել: Հիվանդանոց տեղափոխված տղամարդը նախքան հոսպիտալացվելը համագյուղացի Գուրգեն Սաֆարյանի հետ օղի էր թորել: Միասին խմել էին, հետո կենցաղային հարցի շուրջ վիճել էին, ինչի ընթացքում տղամարդը դանակահարվել էր:

Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ Գուրգեն Սաֆարյանը ներկայացավ ոստիկանության Աշտարակի բաժին: Նրա մեքենայի զննությամբ հայտնաբերվեց դանակ, որը հանցագործության գործիքն է:

Նախաքննությունը շարունակվում է:

Հետախուզվող մեքենաներ

Դեկտեմբերի 10-ին ոստիկանության ՔՀԳՎ երկաթուղային տրանսպորտում կատարվող հանցագործությունների եւ ավտոառեւանգումների դեմ պայքարի բաժանմունքում ԱՊՀ կազմակերպված հանցավորության եւ այլ վտանգավոր հանցագործությունների դեմ պայքարի համակարգող բյուրոյից տեղեկություն ստացվեց, որ Ռուսաստանի իրավապահների կողմից հետախուզվում է «Տոյոտա Քեմրի» մակնիշի ավտոմեքենա: Նշել էին նաեւ մեքենայի նույնացման համարը, այսպես կոչված՝ ՎԻՆ գաղտնաբառը:

ՔՀԳՎ երկաթուղային տրանսպորտում կատարվող հանցագործությունների եւ ավտոառեւանգումների դեմ պայքարի բաժանմունքում այսպիսի տեղեկություններ ստացվում են պարբերաբար:

էջ 3

Վեցամյա վաղեմությամբ հանցագործ

Վեց տարի առաջ ճանապարհային երթեւեկության հարցի շուրջ վեճն ավարտվել էր կրակոցներով:

էջ 2

Սուբուտեքս՝ փոստով

Խուզարկությամբ ծանրոցում՝ կոնֆետի տուփերում, սուբուտեքսի դեղահաբեր հայտնաբերվեցին:

էջ 3

Աղանդները եւ փողը

Զոհին աղանդի մեջ ներքաշելիս չի զգուշացվում, որ ապագայում կարող է որոշակի ծախսեր ունենալ:

էջ 5

ՀՀ ոստիկանության պատվիրակության այցը Վրաստան

Սկիզբը՝ էջ 1

Պաշտոնական այցի շրջանակում հայկական պատվիրակությունը եղավ Վրաստանի ՆԳ նախարարության օպերատիվ կառավարման միասնական կենտրոնում, որտեղ ստորաբաժանման ղեկավարությունը ներկայացրեց ծառայության բնույթն ու գործառույթները, ապա հյուրերը շրջեցին կենտրոնում:

Վրաստանի ՆԳՆ օպերատիվ կառավարման միասնական կենտրոնը գործում է 2016 թվականից: Այստեղից են ղեկավարվում եւ համակարգվում հանրապետության փողոցներում տեղադրված տեսախցիկները: Ի դեպ, տեսախցիկները ոչ միայն արձանագրում են խախտում կատարած մեքենաների համարանիշերը, այլեւ հնարավորություն ունեն նույնականացնելու խցիկի տեսադաշտում հայտնված քաղաքացուն՝ ցույց տալով նրա անհատական տվյալները: Ծրագրվում է շուրջ մեկ տարի հետո տեսախցիկները թիվը հասցնել 4000-ի, ինչը թույլ կտա ավելի արդյունավետ դարձնել երթեւեկության վերահսկումը, հասարակական կարգի պահպանությունն ու պայքարը հանցավորության դեմ:

Նույն օրը ՀՀ ոստիկանության պատվիրակությունն այցելեց Վրաստանի ՆԳ նախարարության ծառայության գործակալության Ուսումնավարժական կենտրոն, որտեղ ծանոթացան ծառայության գործակալության տեխնիկական հագեցվածությանը, տրանսպորտային միջոցների հաշվառման, համարանիշերի տրամադրման աշխատանքին: Ծառայության գործակալության այսպիսի կենտրոններում են տրվում նաեւ վարորդական վկայականները: Հայկական պատվիրակությանը ներկայացվեց դրանց տրամադրման փուլերն ու գործընթացը:

Վրաստանում գործում է նման տասնմեկ կենտրոն, ինչը դյուրացնում է հանրությանը ծառայություններ մատուցելու գործընթացը, արդյունավետ դարձնում իրավապահների աշխատանքը, բացառում անհարկի հապաղումներն ու քաղաքացու ժամանակի կորուստը:

Այցի շրջանակներում ՀՀ ոստիկանության պատվիրակությունը եղավ նաեւ պարեկային ոստիկանությունում:

Պարեկային ոստիկանությունը Վրաստանում գործում է 2004 թվականից, այն հասարակական կարգի ապահովման թիվ մեկ պատասխանատուն է: Պարեկային ոստիկանության ծառայողները նաեւ կանխում, նախականխում եւ բացահայտում են հանցագործություններ: Այն Վրաստանում ընդունված է ոչ թե որպես պատժիչ, այլ ծառայություն մատուցող ստորաբաժանում:

ՀՀ ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանն ու պատվիրակության անդամները շրջեցին պարեկային ոստիկանության շենքում, ծանոթացան պայմաններին, տեխնիկական հագեցվածությանը, պարեկային ծառայության մեքենաներին եւ այլն: Քանի որ Երեւանում եւս շուտով կազմավորվելու է շուրջօրյա շարժական պարեկային ծառայություն, հայկական պատվիրակության անդամները հետաքրքրվեցին ծառայության առանձնահատկությունների, տեխնիկական եւ այլ խնդիրների մասին:

Դեկտեմբերի 19-ին հայկական պատվիրակությունն այցելեց Վրաստանի ՆԳ նախարարության 112 արտակարգ իրավիճակների եւ օպերատիվ արձագանքման կենտրոն:

Այս ծառայությունը Վրաստանում ստեղծվել է 2012 թվականին: 112 հեռախոսահամարը գործում է 24 ժամ: Այն փոխարինել է նախկինում գործող երեք հեռախոսահամարների՝ ոստիկանության, «շտապօգնության» ու հրշեջ ծառայության: Միասնական հեռախոսահամարի միջոցով առավել արդյունավետ է ստանալ հեռախոսազանգերը, կառավարել դրանք եւ ըստ հասցեատերերի փոխանցել տեղեկատվությունը: Արդյունավետ է նաեւ քաղաքացիների համար, որոնք արտակարգ իրավիճակում ստիպված չեն լինի զանգել մի քանի հեռախոսահամարներով: Կենտրոնում աշխատել ցանկացողներն անցնում են պարտադիր մասնագիտական դասընթացներ:

ՀՀ ոստիկանության պատվիրակությունն այցելեց նաեւ ոստիկանության տարածքային ստորաբաժանում: Փորձի փոխանակման նպատակով խոսվեց երկու երկրներում ոստիկանության տարածքային մարմինների տարբեր ծառայությունների մասին, քննարկվեցին դրանց արդյունավետության, կադրերի վերապատրաստման եւ մասնագիտական այլ ուղղություններ: Քննարկվեցին նաեւ փորձի առարկայական փոխանակման հնարավորությունները, ինչը ավելի կամրապնդի երկու երկրների իրավապահների ավանդական համագործակցությունը:

Նույն օրը ՀՀ ոստիկանության պատվիրակությունը վերադարձավ Հայաստան:

Վեցամյա վաղեմությամբ հանցադեպ

Ոստիկանության Նոր Նորքի բաժնի ծառայողների տեւական բացատրական աշխատանքի արդյունքում դեկտեմբերի 12-ին ինքնակամ բաժին է ներկայացել 2012 թվականից միջազգային մակարդակով հետախուզվող Գնել Խզարջյանը:

42-ամյա Գնել Խզարջյանը հետախուզվում էր դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու հատկանիշներով: Խափանման միջոցը՝ կալանք:

Վեց տարի առաջ Սաֆարյան փողոցում ճանապարհային երթեւեկությանը վերաբերող հարցի շուրջ Գնել Խզարջյանը եւ մի տղամարդ վիճել էին: Միջադեպից մոտ կես ժամ անց Խզարջյանը եղբոր եւ դեռեւս ինքնությունը չպարզված երկու անձանց հետ գնացել էր Ջրվեժ՝ իր հետ վիճած անձի ավտոնորոգման կետ: Պարզաբանումները շարունակվել էին. Գնել Խզարջյանը ապօրինի հրազենով կրակոցներ էր արձակել այդ տղամարդու ուղղությամբ՝ պատճառելով ծանր մարմնական վնասվածք:

Հարուցված քրեական գործի քննության ընթացքում հիմնավոր ապացույցներ ձեռք բերվեցին: Որոշում կայացվեց Գնել Խզարջյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին: Նրա նկատմամբ հայտարարվեց հետախուզում: Հետախուզական գործի վարման ընթացքում հայտարարվեց միջպետական, ապա՝ միջազգային հետախուզում:

Գնել Խզարջյանին հայտնաբերելու ուղղությամբ ոստիկանների իրականացրած միջոցառումներն, ի վերջո, արդյունք տվեցին: Հետախուզվողը բաժին ներկայացավ, նաեւ ներկայացրեց ապօրինի պահվող «Մակարով» ատրճանակը, որը հանցագործության գործիքն է:

Նախաքննությունը շարունակվում է:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Կողոպուտները բացահայտվեցին



Օգոստոսի 23-ին ոստիկանության Էրեբունու բաժնում կողոպուտի մասին հաղորդում էր ստացվել: Անհայտ անձը Տիգրան Մեծի պողոտայում հափշտակել էր քաղաքացուհու դրամապանակը եւ փախուստի դիմել: Փաստի առթիվ հարուցվել էր քրեական գործ:

Կողոպուտի մի դեպք էլ գրանցվել էր նոյեմբերի 8-ին: Անհայտ անձը «Վստրեչ» կոչվող կամրջի վրա հափշտակել էր մի կնոջ դրամապանակն ու փախել: Հարուցվել էր քրեական գործ:

Հանցագործությունները բացահայտելու ուղղությամբ ոստիկանության Էրեբունու բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումները արդյունավետ էին. համագործակցելով բաժնի անչափահասների գործերով եւ ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքի ծառայողների հետ, մայրաքաղաքի Լենինգրադյան փողոցից բերման ենթարկեցին գյումրեցի Վահագն Պետրոսյանին:

Պարզվեց, որ եւ՝ նոյեմբերի 8-ին, եւ՝ օգոստոսի 23-ին արձանագրված կողոպուտների հեղինակը 20-ամյա Վահագն Պետրոսյանն է: Նա խոստովանեց նաեւ, որ մայրաքաղաքում կատարել է մի քանի կողոպուտ եւս:

Քննությունը շարունակվում է:

Բնակարանային գողություն Կապանում

Օրեր առաջ ոստիկանության Կապանի բաժնում բնակարանային գողության վերաբերյալ հաղորդում էր ստացվել: Մտել էին Կապանի Շինարարների փողոցի բնակարաններից մեկն ու գողացել 100 հազար դրամ: Պատշգամբից ցատկել ու փախուստի էին դիմել, երբ տանտերերը տուն էին վերադարձել:

Փաստի առթիվ հարուցվեց քրեական գործ:

Հանցագործությունը բացահայտելու ուղղությամբ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության եւ Կապանի բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվեց, որ գողությունը հնարավոր է կատարած լինեն Կապանի բնակիչներ Էդգար Թամրազյանը, Արշակ Բաղդասարյանը եւ Էդգար Քոչարյանը:

Էդգար Թամրազյանն ու Արշակ Բաղդասարյանը շուտով հայտնաբերվեցին եւ հարուցված քրեական գործի շրջանակում կալանավորվեցին: Էդգար Քոչարյանին հայտնաբերելու եւ քննությանը ներկայացնելու ուղղությամբ միջոցառումները շարունակվում են:

Քննությունը շարունակվում է:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հետախուզվող մեքենաներ

Սկիզբը՝ էջ 1

Համագործակցության շրջանակում ընդգրկված են գործընկեր բոլոր երկրների իրավապահ մարմինները, ոստիկանական միջազգային կազմակերպություններն ու Ինտերպոլի համապատասխան ստորաբաժանումները: Ընդհանուր համակարգերի եւ կապի միջոցներով պարբերաբար փոխանակվում է տեղեկատվություն, եւ հանցավորության դեմ պայքարը դառնում է ավելի արդյունավետ ու համակարգված:

«Տոյոտա Քեմրին» առեւանգել էին Ռուսաստանի Կրասնոդար քաղաքում: Սեփականատերը դիմել էր ոստիկանություն, եւ փաստի առթիվ հարուցվել էր քրեական գործ: Նոյեմբերի 28-ից մեքենայի նկատմամբ հայտարարվել էր միջազգային հետախուզում:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության քրեական հետախույզները պարզեցին, որ «Տոյոտան» հաշվառված է Հայաստանում՝ ՀՀ քաղաքացու անվամբ:

Մեքենան հայտնաբերվեց եւ տեղափոխվեց ՃՈ հատուկ պահպանվող տարածք: Սեփականատերը հրավիրվեց ոստիկանություն:

Ինչպե՞ս էր Կրասնոդարում առեւանգված մեքենան հայտնվել Հայաստանում: Ինչպե՞ս էր հնարավոր եղել անարգել անցնել միջպետական սահմաններն ու, առանց օրենք խախտելու, մեքենան հաշվառել Հայաստանում: Հարցեր, որ իրավապահները պիտի պարզեին: Նշենք, որ հանգամանքները ներկայացնում ենք՝ պահպանելով նախաքննության գաղտնիությունը:

Ոստիկանություն հրավիրված քաղաքացին իր բացատրությամբ հայտնեց, որ մեքենան գնել է Երեւանում՝ ՌԴ քաղաքացուց, եւ նույն օրը հաշվառել իր անվամբ: Պարզվեց, որ մեքենան Հայաստան է տեղափոխվել հոկտեմբերին՝ նախքան միջազգային հետախուզում հայտարարելը:

Նմանօրինակ մեքենայությունների ոստիկանները հաճախ են առնչվում: Հանցագործությունը կատարած անձանց նպատակը նույնն է՝ ապօրինի ճանապարհով շահույթ ստանալը: Եվ նպատակին հասնելու համար մշակում են տարաբնույթ մեխանիզմներ, ինչի հետեւանքով, բացի բուն տուժողից, երբեմն տուժում են նաեւ այլ բարեխիղճ քաղաքացիներ:

Ներկայացվող հերթական մեխանիզմին քրեական հետախույզները բախվեցին այս տարվա սկզբին:

Հունվարին ՀՀ-ում Ինտերպոլի ԱԿԲ-ից տեղեկություն ստացվեց, որ

0295 ՎԻՆ համարի վերջնաթվերով ՀՀ ներմուծված «Լեքսուս» մակնիշի ավտոմեքենան ՌԴ իրավապահների նախաձեռնությամբ գտնվում է հետախուզման մեջ:

Ձեռնարկված միջոցառումներով մեքենան հայտնաբերվեց, սեփականատերը հրավիրվեց ոստիկանություն եւ բացատրություն տվեց: Պարզվեց, որ ՀՀ քաղաքացին մեքենան գնել է Մոսկվայում, վարելով բերել Հայաստան եւ օրենքով սահմանված կարգով հաշվառել:

Պարզվել է նաեւ, որ «Լեքսուս»-ի նախկին սեփականատերը իր հերթին մեքենան գնել է երրորդ անձից: Վճարել է գնի մի մասը, կնքել պայմանագիր՝ պարտավորվելով մյուս մասը վճարել որոշ ժամանակ հետո: Պայմանագրի հիման վրա մեքենան վերահաշվառել է իր անունով, հետեւաբար՝ օրենքով սահմանված կարգով է անարգել վաճառել ՀՀ քաղաքացուն: Այնուհետեւ չի կատարել երրորդ անձի նկատմամբ իր վճարման պարտավորությունը: Նա էլ դիմել է իրավապահներին, եւ հարուցված քրեական գործի շրջանակում մեքենայի նկատմամբ հետախուզում է հայտարարվել:

Միջազգային հետախուզման մեջ գտնվող տրանսպորտային միջոցների հայտնաբերման ընթացքում շատ են նաեւ արտերկրից լիզինգային պայմաններով ձեռք բերված տրանսպորտային միջոցները: Այս տարվա ամռանը երկաթուղային տրանսպորտում կատարվող հանցագործությունների եւ ավտոառեւանգումների դեմ պայքարի բաժանմունքում տեղեկություն ստացվեց, որ Հայաստանի տարածքում է ՌԴ-ից խարդախությամբ ձեռք բերված եւ միջազգային հետախուզման մեջ գտնվող «Մերսեդես Բենց» մակնիշի 0360 Վին համարի վերջնաթվերով ավտոմեքենան:

Մեքենան հայտնաբերվեց եւ տեղափոխվեց ՃՈ հատուկ պահպանվող տարածք: Քննությամբ ձեռք բերված տվյալներով պարզվեց, որ ռուսաստանյան մի ընկերություն մեքենան գնել է լիզինգային կազմակերպության միջոցով ու տեղափոխել Հայաստան: Ընկերությունը չի կատարել պայմանագրով նշված վճարման պարտավորությունները, ֆինանսական կազմակերպության հայցով հարուցվել է քրեական գործ եւ մեքենայի նկատմամբ հայտարարվել է միջազգային հետախուզում: Սահմանված կարգով որոշում է կայացվել հետախուզման մեջ գտնվող մեքենան հանձնել հետախուզումը նախաձեռնող իրավապահ մարմնի կողմից լիազորված անձին՝ այն ՌԴ տեղափոխելու համար:

Այս պահին էլ ՃՈ հատուկ պահպանվող տարածքում կայանված են բազմաթիվ տրանսպորտային միջոցներ, որոնք գտնվելով միջազգային հետախուզման մեջ՝ հայտնաբերվել են ոստիկանների հետեւողական աշխատանքի արդյունքում:

ՀՀ ոստիկանության՝ հանցագործության այս տեսակի դեմ պայքարի եւ հակազդման պատասխանատուները երաշխավորում են, որ չկա այնպիսի հանցավոր մեխանիզմ, անկախ դրա իրագործման երկրից ու պայմաններից, որ հնարավոր չլինի բացահայտել: Ընդամենը ժամանակի հարց է: Բոլոր հանցագործությունները ենթակա են բացահայտման:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

Դասընթացը վարում են հոգեբանները

Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության 3-րդ վարչության նախաձեռնությամբ, դեկտեմբերի 12-ից 15-ը Ծաղկաձորում անցկացվեց ոստիկանության անչափահասների գործերով եւ ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքների ավագ տեսուչների վերապատրաստման հերթական դասընթացը:

«Մարդու իրավունքների խթանում եւ պաշտպանություն» ծրագրի շրջանակներում կազմակերպված դասընթացը ոստիկանությունն իրականացնում է ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի եւ ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ համատեղ: Դասընթացին մասնակցում էին ոստիկանության 58 ծառայողներ, իսկ դասընթացը վարում էին հոգեբանները:

«Ընտանեկան բռնությունը մարդու իրավունքների ոտնահարման տարածված հիմնախնդիրներից է, որի հիմնական նպատակը վերահսկողություն հաստատելն է դիմացինի նկատմամբ:

Բռնությունը կարող է իրականանալ ինչպես ֆիզիկական ուժի կի-

կական հետեւանքներից զատ, խոսեցին զոհի աջակցության սկզբունքների մասին՝ ընդգծելով, որ զոհի աջակցության առաջնային նպատակը նրա կարիքների գնահատումն է, հուզական կայունության վերականգնումն ու հետագա տրավմատիզացիայի կանխումը:

Փորձագետները ոստիկանության ծառայողներին սովորեցրին զոհի հետ զրուցելու հմտությունները՝ ինչպե՞ս պետք է գործել առաջին արձագանքի ժամանակ, որո՞նք են ռիսկի գնահատման առանձնահատկությունները եւ այլն: Պարապմունքներն ընթացան կոնկրետ օրինակների քննարկման, հարց ու պատասխանի միջոցով:

Վերապատրաստման այսօրինակ դասընթացները հնարավորություն են ընձեռում ոստիկաններին անհրաժեշտ գիտելիքներ ու հմտություններ ձեռք բերել՝ մասնագիտական գործունեության մեջ կիրառելու համար:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Օպերատիվ

Պատուհաս հարեւանները

Մայրաքաղաքի Էրեբունի զանգվածի բնակչուհի Մանուշակ Մովսիսյանը կռվարար կին է. հարեւաններն աշխատում են հետը գլուխ չդնել: Դուստրերը՝ Մարինեն ու Նարինեն, մեկին մեկ մորն են քաշել՝ լեզվանի, կռվարար, բանսարկու: Մարինեն երեսունմեկ տարեկան է, Նարինեն՝ քսանութ: Երեքով են ապրում՝ վաթսունամյա մայրն ու դուստրերը:

Պատկից հարեւանի հետ վիճահարույց խնդիր ունեն. առանձին մուտքերով, բայց նույն բակում են տները: Արտերկիր մեկնած նախկին տերերը ժամանակին տունը վաճառել են մաս-մաս՝ տարբեր մարդկանց, ու հիմա այն կռվախնձոր է: Մանուշակ Մովսիսյանն ու դուստրերը պահանջում են, որ պատկից հարեւանները հեռանան. ըստ նրանց՝ իրենք ժամանակին ամբողջ տունն էին գնել:

Տան սեփականության մասին փաստաթղթերում ամեն ինչ այնքան էլ հստակ չէ: Վիճահարույց խնդիրը քաղաքացիական դատավարության կարգով է լուծվելու, ինչի համար դատարան հայցադիմում է ներկայացվել: Բայց Մանուշակն ու դուստրերը այդքան համբերություն չունեին, որ սպասեին դատարանի որոշմանը:

Որոշել էին, որ ամբողջ տունն իրենց սեփականությունն է, հարեւանի մասնաբաժնի հետ կապված պլան էին մշակել՝ վարձով էին տալու, ու հիմա ամեն օր տարածքն ազատելու պահանջ էին ներկայացնում՝ իբր միեւնույն է՝ դատարանը հոգուտ իրենց է հարցը լուծելու:

Հերթական միջադեպը նոյեմբերի 25-ին էր: Անսովոր չէր, բայց մյուս հարեւանները, որ յուրատեսակ տուժող էին, ամեն անգամվա պես չհանդուրժեցին Մանուշակի ու նրա աղջիկների գոռում-գոչյունը:

Առավոտյան 9-ի կողմերն էր, օրը՝ կիրակի: Մանուշակ Մովսիսյանի «դիրիժորությամբ» «տրիոն» սկսեց պահանջատիրական ցուցադրությունը: Քնահարամ հարեւանները դիտողություն արեցին, թե՝ թողեք կիրակի օրով հանգստանանք, ինչից մոր ու դուստրերի զայրույթը ոչ միայն կրկնապատկվեց, այլեւ ուղղորդվեց նոր հասցեատերերին: Հայհոյեցին, քարեր շպրտեցին հարեւանների ուղղությամբ...

Ի վերջո, հարեւաններից մեկն ահազանգեց ոստիկանություն, թե՝ փրկեք մեզ այս պատուհասներից:

Հիմա դատական ատյանները տան սեփականության հարցի հետ լուծելու են նաեւ Մանուշակ Մովսիսյանին ու նրա դուստրերին խուլիգանության համար քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Սուբուտեքս՝ փոստով

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության եւ Կումայրիի բաժնի ծառայողները, ամիսներ տեւած համատեղ հետախուզական միջոցառումների արդյունքում, դեկտեմբերի 5-ին ապօրինի թմրաշրջանառության վերաբերյալ տեղեկություններ ստացան:

Գյումրու Տիգրան Մեծի պողոտայի փոստային առաքման բաժանմունքի մոտ հայտնաբերվեց ու ոստիկանության Կումայրիի բաժին բերման ենթարկվեց Սահականուշ Սարգսյանը: Գյումրեցի կինը բոպեներ առաջ արտերկրից առաքված ծանրոց էր ստացել: Ըստ ոստիկանների տեղեկությունների՝ ծանրոցում թմրամիջոց կար:

Խուզարկությամբ կոնֆետի տուփերում B8 գրառմամբ 44՝ ամբողջական, 6 մասնատված սուբուտեքսի դեղահաբեր հայտնաբերվեցին: Կնոջ հայտարարությամբ՝ դրանք ուղարկել էր Եվրոպայում բնակվող ազգականը՝ մեկ այլ ազգականի փոխանցելու նպատակով:

Ոստիկանության ծառայողները շարունակեցին հետախուզական միջոցառումները՝ կնոջ հայտնած տեղեկությունների իսկությունը պարզելու նպատակով: Նոր հանգամանքներ ի հայտ եկան: Պարզվեց, որ Սահականուշ Սարգսյանը նախկինում եւս արտերկրից սուբուտեքս է ստացել ու վաճառել Գյումրիում ապրող 35-ամյա մի տղամարդու, որը նույնպես բերման ենթարկվեց ոստիկանության Կումայրիի բաժին:

Հետագա միջոցառումներով պարզվեց, որ այդ տղամարդը Սահականուշ Սարգսյանից պարբերաբար սուբուտեքս է գնել՝ ընկերների հետ օգտագործելու նպատակով:

Փաստով նյութեր են նախապատրաստվում:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Օպերատիվ

Աշխատանքի «փնտրտուք»

Վանաձորցի Համլետ Հակոբյանը մշտական աշխատանք չուներ. հանապազօրյա հացը վաստակում էր օրավարձով աշխատանքներ կատարելով: Ամիսներ առաջ գնաց Գուգարք գյուղ՝ աշխատանք փնտրելու: Հարցուփորձ արեց, բայց գործատու չգտավ: Օրը ճաշ էր դարձել, երբ որոշեց տուն գնալ, իսկ աշխատանքի փնտրտուքը շարունակել հաջորդ օրը:

Գուգարքից ոտքով ճանապարհ ընկավ Վանաձոր: Հոգնած էր: Անբնակ տներից մեկի մոտ նստեց քարին՝ հանգստանալու: Աչքը դեսուդեն գցելով՝ բակում նկատեց մետաղյա անկյունակներ: Ցերկմտեց: Գողացավ եւ նույն օրն իսկ զբաղվեց դրանց վաճառքով:

Հաջորդ օրը աշխատանք գտնելու մտադրությամբ կրկին ոտքով գնաց Գուգարք եւ դարձյալ ոչինչ չգտավ: Վերադարձին մեկ այլ տնակի մոտ կանգ առավ հանգստանալու: Այդտեղից էլ գողացավ մետաղյա անկյունակներ, որոնց համար էլ գնորդ գտավ:

Համլետը շարունակում էր «աշխատանք» փնտրել՝ չկասկածելով, որ հայտնվել է ոստիկանության Բազումի բաժնի աշխատակիցների օպերատիվ տեսադաշտում: Գողություն կատարելու կասկածանքով էլ բերման ենթարկվեց: Նյութերի նախապատրաստման ընթացքում խոստովանական բացատրություններ տվեց եւ մատնացույց արեց դեպքի վայրերը:

Դիմողների բողոքների բացակայությամբ, սակայն, քրեական գործի հարուցումը մերժվել է:

«Մեղավոր» խմիչքը

Վանաձորցի Կարեն Հայրապետյանը կերուխումից հետո բակում հարմար տեղավորվել էր նստարանին: Նպատակը փոքր-ինչ սթափվելն էր: Մտովի հասել էր հեռուները, բայց հիշողությունները տրամադրությունը գցեցին: Ինքն իր հետ կռվի մեջ էր, երբ շենքից դուրս ելավ Գայանեն, որին Կարենը չէր ճանաչում: Չգիտես ինչու, վիրավորական արտահայտություններ նետեց անծանոթուհուն: Գայանեն չարձագանքեց, զարմացած՝ անծանոթին նայեց: Արձագանքողը եղավ շենքի բնակիչ Վահրամը, որը Գայանեի ամուսնու ընկերն էր:

Վահրամը մոտենալով Կարենին՝ բացատրություն պահանջեց: Կարենը, որ ալկոհոլի ազդեցության տակ էր, ո՛չ իր ասածները կարող էր մեկնաբանել, ո՛չ էլ ցանկություն ուներ: Վեճն անխուսափելի էր:

Վահրամը ձեռքերով ու ոտքերով խփեց Կարենին: Վեճին միացավ նաեւ Գայանեի ամուսինը:

Կատարվածով ոստիկանության Բազումի բաժնում նյութեր նախապատրաստվեցին: Կողմերը բացատրություններ տվեցին: Նշանակվեց դատաբժշկական փորձաքննություն, ըստ որի՝ Կարենին պատճառվել էր թեթեւ վնաս՝ առողջության կարճատեւ քայքայումով: Սակայն դիմողի բողոքի բացակայությամբ քրեական գործի հարուցումը մերժվել է:

Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ

Տարօրինակ օրենքներ



Մեզանում լայնորեն տարածված կարծիքի համաձայն՝ Արեւմուտքում, մասնավորապես՝ ԱՄՆ-ում, բարքերը չափից ավելի ազատականացված են, եւ ամեն ինչ անում ենք՝ մեր երիտասարդներին արեւմտյան հոռի բարքերի ազդեցությունից զերծ պահելու համար: Մինչդեռ պարզվում է, հատկապես բարքերին վերաբերող արեւմտյան օրենսդրությունը ոչ միայն խիստ է, այլեւ տարօրինակության է հասնում: Ներկայացնենք մարդկանց ինտիմ հարաբերություններին վերաբերող՝ ԱՄՆ տարբեր նահանգներում գործող ամենատարօրինակ օրենքներից մի քանիսը:

Այդահո նահանգում արգելվում է սեքսով զբաղվել մեքենայի մեջ, ինչը միանգամայն տրամաբանական է թվում եւ հեռու է տարօրինակ որակումից: Հանցարարքի պահին օրինախախտներին հայտնաբերած ոստիկաններին, սակայն, հրահանգված է անմիջապես չձերբակալել նրանց, այլ կայանել կասկածելի ավտոմեքենայի հետեւում, երեք անգամ ազդանշան տալ, ապա երկու րոպե սպասելուց հետո միայն մոտենալ մեքենային եւ թակել ապակին:

Այս արգելքն առավել կտրուկ է դրված Ալաբամայի նահանգում, ուր կանանց կողքով երթեւեկելիս վարորդներին արգելվում է նույնիսկ միացնել շչակը:

Այովայում գործող օրենքը սահմանում է, որ համբույրը չպետք է հինգ րոպեից ավելի տեւի: Բեղավոր տղամարդկանց արգելվում է մարդկանց ներկայությամբ կանանց համբուրել:

Էյմոս քաղաքում ամուսինն իրավունք չունի երեք կումից ավելի գարեջուր խմել, երբ սեր է անում սեփական կնոջ հետ: Օտումվայում էլ տղամարդկանց արգելվում է աչքով անել անծանոթ կանանց:

Արքանզասում կնոջ եւ տղամարդու անմեղ սիրախաղի (այսպես ասած՝ ֆլիրտի) պատճառով միանգամայն հնարավոր է 30 օրով հայտնվել բանտում, իսկ կողակցին դավաճանելու համար ստիպված կլինես 20-ից մինչեւ 100 դոլար տուգանք վճարել:

Դժվար է պատկերացնել առավել տարօրինակ օրենք, քան Վայոմինգ նահանգում գործողն է՝ օրենքն արգելում է սեքսով զբաղվել խանութ մտնելիս: Այս իմաստով ռեկորդակիրը Նյուքասլ քաղաքն է, որտեղ օրենքը դա արգելում է նաեւ մսի համար նախատեսված սառնախցիկներում:

Եթե Հավայի նահանգում հանդիպել եք ձեր երազների կնոջը եւ ցանկանում եք նրա հետ սեր անել, ապա ճշտեք, թե նա քանի տարեկան է. եթե 18 տարին չի լրացել, ապա նրա ծնողներին սպասում է երեքամյա ուղղիչ աշխատանքների պատիժ այն բանի համար, որ թեթեւամիտ դուստր են դաստիարակել:

Իլինոյս նահանգում հանցագործություն է համարվում, եթե ամուսինները իրենց հարսանիքի տարեդարձի օրը սեր են անում անտառում, ձկնորսության կամ որսի վայրում: Այդտեղ եւս օրենքից դուրս է համարվում բեղավոր տղամարդկանց համբույրը:

Ինդիանա նահանգում 18 տարեկանն անց տղաները կարող են ձերբակալվել եւ բռնաբարության մեջ մեղադրվել, եթե նրանց մեքենայի ուղեւորուհին 17 տարեկանից փոքր է:

Հաճախակի համբուրվելու հակում ունեցող տղամարդկանց օրենքը խստագույնս արգելում է բեղ կրել:

Կալիֆոռնիայում կողակիցների դավաճանությունը շատ ավելի խիստ է պատժվում՝ 1000 դոլարի չափով տուգանք եւ մեկամյա բանտարկություն: Արգելված է հակաբեղմնավորման ապրանքանիշերի գովազդը:

Դրանց օգտագործումը օրենքով ընդհանրապես արգելված է Քոնեքթիկուտ նահանգում, իսկ ամենատարօրինակն այն է, որ նահանգի բնակիչ տղամարդիկ իրավունք չունեն համբուրել քնած կնոջը:

Բոսթոնում (Մասաչուսեթս) գործող օրենքն էլ արգելում է համբուրվել եկեղեցու դիմաց:

Ամենատարօրինակ օրենքը, որն ընդունվել է Մինեսոթա նահանգում. տեղաբնակ տղամարդկանց արգելվում է կողակցին մոտենալ, եթե իրենից փչում է սխտորի, սոխի կամ ձկան հոտ: Ալեքսանդրիա քաղաքում էլ կանայք իրավունք ունեն դատարանի միջոցով պահանջել, որ իրենց ամուսինները կամ մաքրեն ատամները, կամ չհամարձակվեն ցանկանալ իրենց:

Այս տարօրինակ օրենքներից ամենատխուր դեպքը գրանցվել է Մինեսոթայի գերագույն դատարանում. լսելով կնոջ հայցը՝ ամուսնու համառ ցանկության վերաբերյալ, դատարանը վճռեց, որ 45-ամյա տղամարդու՝ շաբաթական 3-4 անգամ սեքսով զբաղվելու ցանկությունը նորմայից շեղում է, եւ դժբախտին ուղարկեց հոգեբուժարան՝ հարկադիր բուժման:

Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ

Զվարճալի ամփոփագիր

Համակուրսեցին

23-ամյա Մանյան հաղորդում է տվել, որ փետրվար ամսին վարկային կազմակերպության միջոցով ձեռք է բերել «ԲՄՎ» մակնիշի ավտոմեքենա, որը հանձնել է համակուրսեցի 25-ամյա Վահագնին: Երիտասարդը պարտավորվել է վճարել վարկի գումարը, սակայն չի վճարում: Փաստորեն՝ խաբեությամբ եւ վստահությունը չարաշահելու եղանակով տիրացել է մեքենային:

Ձեռնարկվում են միջոցառումներ Վահագնին հայտնաբերելու ուղղությամբ:

Որդին ու փեսան

52-ամյա մի կին հաղորդում է տվել, որ երեք օր առաջ որդին եւ նախկին փեսան իր տնակին կից կառույցից գողացել են լվացարան, զուգարանակոնք եւ ջրի ծորակի փական՝:

Կինը նախկինում ոստիկանություն չի դիմել՝ մտածելով, որ գողացածը հետ կբերեն:

Ձեռնարկվում են միջոցառումներ գողոնը, որդուն եւ նախկին փեսային հայտնաբերելու ուղղությամբ:

Ստի ոտքերը

Ոստիկանություն է զանգել 42-ամյա Լուսինեն եւ հայտնել է, որ իր տնակի դուռը կոտրել ու գողացել են լվացքի մեքենա, սառնարան, բրդյա վերմակներ, ալյումինե կաթսաներ եւ չուգունե թավաներ:

Ձեռնարկված միջոցառումներով պարզվել է, որ ոչ մի գողություն էլ չի եղել: Լուսինեն հանցագործության մասին տվել է սուտ մատնություն: Նշված ապրանքներն ամբողջությամբ հայտնաբերվել են նրա տանը:

Ավտոկռունկով ու բեռնատարով

Օպերատիվ տեղեկություններն իրացնելով ոստիկանները բերման են ենթարկել 43-ամյա Արամին՝ իր վարած ավտոկռունկով, եւ 36-ամյա Արտակին՝ իր վարած «ԿամԱԶ-ով», որը բարձված էր բետոնե պանելներով: Նրանք բացատրություն են տվել, որ պանելները գողացել են նախկին հանգստյան տան կիսաքանդ ճաշարանի հետնամասից:

Ձեռնարկվում են միջոցառումներ գույքի սեփականատիրոջը հայտնաբերելու ուղղությամբ:

Գոգաթիակը երկաթից էր

Գիշերվա երկուսին մոտ ոստիկանություն է զանգել 42-ամյա մի տղամարդ եւ հայտնել, որ տղան եւ կինը ծեծել են իրեն:

Մեկնած ոստիկաններին հաղորդում է տվել, որ կինը եւ որդին վիճել են իր հետ, որի ժամանակ կինը երկաթյա գոգաթիակով, այլ կերպ ասած՝ սավոկով, ցանկացել է խփել իր գլխին, ինքը ձեռքով պաշտպանվել է, ինչի հետեւանքով վնասվել է միայն ձեռքը:

www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ դեկտեմբերի 13-ից 20-ն ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 54 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 3-ը հետախուզվում էր դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու, 2-ը՝ դիտավորությամբ առողջությանը թեթեւ վնաս պատճառելու, 3-ը՝ ծեծի, 3-ը՝ մարդուն առեւանգելու, 6-ը՝ գողության, 1-ը՝ գողության փորձի, 2-ը՝ խարդախության, 2-ը՝ խարդախության եւ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու,1-ը՝ յուրացնելու կամ վատնելու, 1-ը՝ հարկը, տուրքը կամ պարտադիր այլ վճարը չվճարելու, 1-ը՝ ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթեւեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու եւ ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելու, 2-ը՝ խուլիգանության, 1-ը՝ առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության, 1-ը՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու, կաշառք ստանալու եւ պաշտոնեական կեղծիքի, 1-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու, 2-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու եւ պետական սահմանն ապօրինի հատելու, 1-ը՝ զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 6 հետախուզվող:

Արձանագրվել է 93 ճանապարհատրանսպորտային պատահար. 9 մարդ զոհվել է, 151-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 28 դեպք. 1 մարդ զոհվել է, 28-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Հանրապետության ճանապարհներին

Դեկտեմբերի 14-ին «ԿԻԱ» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Խանջյան փողոցում վրաերթի է ենթարկել մի կնոջ, որը տեղում մահացել է:

■

Դեկտեմբերի 14-ին «Սուզուկի» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Հույսի ավան թաղամասի 1-ին փողոցում վրաերթի է ենթարկել 15-ամյա աղջկա, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 14-ին «Նիսան» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Բ. Մուրադյան փողոցում վրաերթի է ենթարկել 51-ամյա կնոջ, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 15-ին «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենան Երեւանի Զ. Քանաքեռցու փողոցում վրաերթի է ենթարկել 28-ամյա երիտասարդի, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 15-ին «Ֆոլքսվագեն Պասատ» մակնիշի ավտոմեքենան Գոգարան-Սարահարթ ճանապարհի 1-ին կմ-ին մերկասառույցի պատճառով ընկել է ձորը. 18-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 15-ին «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենան Աբովյան քաղաքի 3-րդ միկրոշրջանում վրաերթի է ենթարկել 61-ամյա կնոջ, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 16-ին «Մերսեդես» մակիշի ավտոմեքենան Աբովյան քաղաքի Կոտայքի եւ Երեւանյան փողոցների խաչմերուկում վրաերթի է ենթարկել 53-ամյա տղամարդու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 16-ին «Օպել Աստրա» մակնիշի ավտոմեքենան բախվել է Գյումրի քաղաքի Բուլվարային փողոցի պատին: Վարորդն ու նրա կինը տեղում մահացել են, իսկ չորս ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 17-ին «BMW 520» մակնիշի ավտոմեքենան Երեւան-Մեղրի ճանապարհի 178-րդ կմ-ին դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ գլորվել ձորը. ուղեւորներից մեկը տեղում մահացել է, իսկ վարորդն ու մյուս 4 ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 17-ին Երեւանի Ֆուչիկի փողոցում իրար են բախվել «Ֆոլքսվագեն», «Նիսան» եւ «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենաներ. «Տոյոտա»-ի վարորդն ու երեք ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց, իսկ «Ֆոլքսվագեն»-ի վարորդը մահացել է:

■

Դեկտեմբերի 18-ին «ԲՄՎ» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Արտաշիսյան փողոցում վրաերթի է ենթարկել 64-ամյա կնոջ, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 18-ին «Միցուբիշի» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Ա. Բաբաջանյան փողոցում վրաերթի է ենթարկել 60-ամյա կնոջ, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 18-ին Երեւանի Թբիլիսյան խճուղում իրար են բախվել «Տոյոտա» եւ «Ֆորդ» մակնիշի ավտոմեքենաներ. «Ֆորդ»-ի 20-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 18-ին Արմավիր քաղաքի Հանրապետության-Սայաթ-Նովայի փողոցների խաչմերուկում «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 9-ամյա երեխայի, որը մարմնական վնասվածքով տեղափոխել է հիվանդանոց:

Աղանդները եւ փողը

Աղանդները բնորոշելիս ու դասակարգելիս հիմնականում փորձ է արվում ինչ-որ չափով ընդհանրացնել դրանք, բայց, միեւնույն է, բնորոշումը լիարժեք չի լինում, որովհետեւ նորահայտ տոտալիտար աղանդները կրոնական ու բարեգործական քողի տակ նաեւ բացում այլ խնդիրներ են լուծում: Մասնավորապես՝ վաղուց արդեն հայտնի է, որ դրանցից շատերն իրենց նպատակին հասնելու ճանապարհին, որպես ամենաարդյունավետ միջոց, ավելի հաճախ են օգտագործում նյութական արժեքները՝ փողը: Մեծ արդյունքի հասնելու համար, բնականաբար, շատ մեծ ներդրումներ են անհրաժեշտ, իսկ որ աղանդները նման միջոցների տիրապետում են՝ փաստ է: Ավելին՝ մի շարք աղանդներ կոմերցիոն կառույցներ են: Ընդհանրապես, աղանդավորական շարժումները առաջին հերթին ուղղված են մեկ նպատակի՝ ամեն գնով իշխանության հասնել, իսկ շուկայական հարաբերությունների աշխարհում իշխանությունը նաեւ ֆինանսական հզորություն է ենթադրում...

Մի շարք երկրների օրենքներով արգելվում է օտարերկրյա ծագում ունեցող կրոնական կազմակերպությունների ֆինանսավորումը դրսից, սակայն հայտնի է, որ օրենքի այդ կետն անընդհատ խախտվում է: Օրինակ, բավական սուղ միջոցներ ունեցող մեր հանրապետությունում որտեղի՞ց այնպիսի միջոցներ, որ ամսական այս կամ այն ուսմունքի մասին տասնյակ հազարավոր գրքույկներ տպագրվեին, այն էլ՝ եվրոպական լավագույն տպարաններում: Ակնհայտ է դրսի աջակցությունը, իսկ օրենքի առկայության դեպքում, կարելի է ասել, նաեւ՝ միջամտությունը:

Ասվածն ամենեւին մերկապարանոց չէ. փաստենք միայն, որ աշխարհում մեծ տարածում գտած աղանդներից մեկի տպագիր մարմինը լույս է տեսնում ամիսը երկու անգամ՝ 13 միլիոն տպաքանակով, այսինքն՝ մոտավորապես 26 միլիոն գրքույկ մեկ ամսում՝ աշխարհի 67 լեզուներով: Ընդհանուր առմամբ՝ 1920-1996 թթ. ընկած ժամանակահատվածում լույս է տեսել 9 միլիարդ օրինակ՝ 200 լեզուներով:

Սա չի նշանակում, որ աղանդները մեր երկրում կամ թե մեկ այլ տեղ միայն սպառում են, միջոցներ վատնում: Աղանդի անդամները պարտավոր են տարածել ամսագրերը: Նրանք նախ իրենք են գնում, ապա՝ տարածում: Այսպիսով, ամսագրերի ու գրքերի հրատարակումը ղեկավարող կորպորացիայի համար բացարձակապես անկորուստ գործ է: Տպաքանակի ամեն մի օրինակ, փաստորեն, վաճառված է նախքան տպագրվելը: Շահույթը մեծացնելու «խիստ բարեպաշտ» նպատակով՝ աղանդի անդամներին պարտադրվում է գիրք ու ամսագիր գնել ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար:

Բացի դրանից, աղանդներից շատերն իրենց անդամներից պարբերաբար անդամավճար են գանձում. մի դեպքում դա կոչվում է տասանորդ, այսինքն՝ աղանդավորը պարտավոր է իր եկամուտի 10 տոկոսը զոհաբերել ընդհանուր գործին, մյուս դեպքում՝ տոկոսաչափն ավելին է կամ պակաս, մեկ ուրիշ աղանդում ստիպում են, որ ունեցվածքդ աղանդին նվիրես եւ այլն:

Առհասարակ, հերթական զոհին աղանդի մեջ ներքաշելիս չեն զգուշացնում, որ ապագայում կարող է որոշակի ծախսեր ունենալ. սկզբում ամեն ինչ մաքուր է, անվճար, հետո, երբ մարդն այլեւս աղանդավոր է, ասել է թե՝ հնազանդ, կամակատար, «հոգու փրկության» համար ամեն ինչի պատրաստ, հրամցվում է իրականությունը: Ցանկացած աղանդի սկզբունքն է՝ մարդուն ներքաշել իր շարքերը, նախքան որեւէ բան կիմանա աղանդի մասին:

Եվրոպական երկրների ճնշող մեծամասնությունը որոշ աղանդների ընդհանրապես կրոնական կազմակերպություն չի համարում: 1999-ի սկզբներին ամբողջ աշխարհում մեծ տարածում ստացած մի աղանդ Ֆրանսիայում զրկվեց կրոնական կազմակերպության կարգավիճակից: Մինչ այդ կազմակերպությունը որպես կրոնական էր գրանցված, ուստի եւ ֆրանսիական օրենքների համաձայն՝ դիտվում էր շահույթ չհետապնդող եւ օգտվում էր հարկային արտոնություններից: Սակայն արդարադատության մարմինները հիմնավորեցին, որ կազմակերպությունը շահույթ է հետապնդում եւ նրանց պարտավորեցրին վճարել վերջին տարիների հարկերը՝ ավելի քան 50 միլիոն դոլար:

Շարունակելի

Միլիցիայի աշխատակիցների կոչումները

1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումից հետո իշխանությունները չեղյալ համարեցին ժամանակավոր կառավարության սահմանած կոչումները եւ գործածության մեջ մտցրին՝ միլիցիոներ, ավագ միլիցիոներ, օպերատիվ լիազոր, քրեական հետախուզության գործակալ եւ այլ կոչումներ: Իրավիճակը փոխվեց 1930-ական թվականների երկրորդ կեսին, երբ խորհրդային ղեկավարությունը որոշեց կանոնակարգել ինչպես բանակի, այնպես էլ միլիցիայի կոչումները:

1936 թ. մայիսի 5-ին ԽՍՀՄ ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատը հրապարակեց հրաման, որի համաձայն՝ միլիցիայի ղեկավար եւ շարքային անձնակազմի համար սահմանեցին հատուկ կոչումներ, որոնք էականորեն տարբերվում էին բանակայինից:

Այսպիսով, 1936 թ. խորհրդային միլիցիայում ամրագրվում են հետեւյալ կոչումները՝ միլիցիոներ, ավագ միլիցիոներ, միլիցիայի առանձնացված հրամանատար, միլիցիայի դասակի հրամանատարի օգնական, միլիցիայի ավագ, միլիցիայի սերժանտ, միլիցիայի կրտսեր լեյտենանտ, միլիցիայի լեյտենանտ, միլիցիայի ավագ լեյտենանտ, միլիցիայի կապիտան, միլիցիայի մայոր, միլիցիայի ավագ մայոր, միլիցիայի տեսուչ, միլիցիայի տնօրեն եւ միլիցիայի գլխավոր տնօրեն:

1936 թ. հուլիսի 3-ին ԽՍՀՄ կառավարությունը սահմանեց, թե միլիցիայի աշխատակիցները որքան ժամանակ անց կարող են ստանալ նոր կոչումներ: Այսպես, միլիցիայի սերժանտ, միլիցիայի կրտսեր լեյտենանտ, միլիցիայի լեյտենանտ եւ միլիցիայի ավագ լեյտենանտ կոչումներում ծառայելու ժամկետը սահմանվում էր երեք տարի, միլիցիայի կապիտանի համար՝ չորս, միլիցիայի մայորինը՝ հինգ տարի: Միլիցիայի ավագ մայոր, միլիցիայի տեսուչ, միլիցիայի տնօրեն եւ միլիցիայի գլխավոր տնօրեն կոչումների համար ժամկետներ չէին սահմանվում. կոչումները շնորհվում էին անհատապես: Ժամկետից շուտ կոչումներ շնորհվում էին միայն բացառիկ դեպքերում՝ հատուկ ծառայության կամ ծառայության ընթացքում ձեռք բերված մեծ արդյունքների համար:

1936-1943 թթ. ԽՍՀՄ միլիցիայում բարձրագույն կոչումն էր միլիցիայի գլխավոր տնօրենը: Այն իր աստիճանով համապատասխանում էր Պետական անվտանգությունում՝ 1-ին կարգի պետական անվտանգության կոմիսարի, Կարմիր բանակում՝ բանակի հրամանատարի 1-ին կարգին: Միլիցիայի գլխավոր տնօրենի կոչման ոչ ոք չի արժանացել:

Հաջորդը միլիցիայի տնօրենի կոչումն էր, որը համապատասխանում էր Պետական անվտանգության՝ 2-րդ կարգի կոմիսարի, Կարմիր բանակում՝ բանակի հրամանատարի 2-րդ կարգին:

Իր նշանակությամբ երրորդ կոչումը միլիցիայի տեսուչն էր: Այն հավասարազոր էր Պետական անվտանգության՝ 3-րդ կարգի պետական անվտանգության կոմիսարի, Կարմիր բանակում՝ բանակի հրամանատարի 3-րդ կարգին:

Միլիցիայի տեսուչից մեկ աստիճան ցածր էր միլիցիայի ավագ մայորի կոչումը: Այն հավասարազոր էր ՆԳԺԿ պետական անվտանգության մայորին եւ Կարմիր բանակի բրիգադի հրամանատարին: Միլիցիայի մայոր կոչումը հավասարազոր էր պետական անվտանգության մայորին եւ Կարմիր բանակի բրիգադի հրամանատարին: Միլիցիայի կապիտան կոչումը համապատասխանում էր պետական անվտանգության կապիտանին եւ Կարմիր բանակի փոխգնդապետին: Միլիցիայի ավագ լեյտենանտ կոչումը հավասարազոր էր պետական անվտանգության ավագ լեյտենանտին եւ Կարմիր բանակի մայորին: Միլիցիայի լեյտենանտ կոչումը համապատասխանում էր պետական անվտանգության լեյտենանտին եւ Կարմիր բանակի կապիտանին: Միլիցիայի կրտսեր լեյտենանտ կոչումը հավասարազոր էր պետական անվտանգության կրտսեր լեյտենանտին եւ Կարմիր բանակի ավագ լեյտենանտին: Միլիցիայի սերժանտը, որ հրամանատարական կազմի կրտսեր կոչումն էր, համապատասխանում էր պետական անվտանգության սերժանտին եւ Կարմիր բանակի լեյտենանտին:

Շարունակելի

Պատրաստեց **Ռուբեն ՍԱՀԱԿՅԱՆԸ**

Սպանություն տաղավարում

2017 թվականի հունվարի 11-ին Երեւանի Վարդանանց փողոցի շենքի բակի տաղավարում պետհամալսարանի առաջին կուրսի մի քանի ուսանողների վեճը ողբերգական ավարտ ունեցավ. Կարեն Չատիկյանը դանակով հարվածեց Ռաֆի Մարտիրոսյանին ու Վահե Մուրադյանին: Ռաֆի Մարտիրոսյանի առողջությանը պատճառվեց միջին ծանրության վնաս, իսկ Վահե Մուրադյանը զրկվեց կյանքից:

Վահե Մուրադյանը, Ռաֆի Մարտիրոսյանն ու գործով վկա մի քանի երիտասարդներ դպրոցական ընկերներ էին ու դեռ դպրոցական տարիներից մասնակցում էին տարբեր առարկայական օլիմպիադաների: Հերթական օլիմպիադայում Ռաֆի Մարտիրոսյանը շահել էր ու ստացել «Բուկինիստ» գրախանութի նվեր-քարտ՝ 10 հազար դրամ, ինչով կարող էր միայն գրքեր գնել:

Երբ ընկերները հանդիպել էին համալսարանում, Ռաֆին ասել էր, թե նրանց կուրսի «դոդիկներին» քարտը կվաճառի 5 հազար դրամով՝ նրանք թող գրքեր գնեն, իսկ իրեն գումարը տան: Հիշյալ արտահայտությունը տղաներից մեկը հայտնել էր համակուրսեցիներին: Կարեն Չատիկյանը վիրավորվել ու ցանկացել էր պարզաբանում ստանալ Ռաֆի Մարտիրոսյանից:

2017 թ. հունվարի 11-ին Կարեն Չատիկյանը հանդիպման էր գնացել «թիթեռնիկ» տեսակի դանակով, ինչի մասին գիտեին նրա հետ պարզաբանման գնացող ընկերներից մի քանիսը. նրանք պահանջել էին, որ Կարենը դանակը չտանի հանդիպման կամ իրենց տա: Կարենը չէր համաձայնել, բայց հավաստիացրել էր, թե դանակ չի գործադրելու: Սակայն այդ դանակով մահացու հարված էր հասցրել Վահե Մուրադյանի սրտին, իսկ բուն՝ «դոդիկներ» արտահայտությունն արած Ռաֆի Մարտիրոսյանին պատճառել էր միջին ծանրության վնաս:

Կարեն Չատիկյանին մեղադրանք էր առաջադրվել դիտավորյալ սպանության եւ առողջությանը դիտավորությամբ միջին ծանրության վնաս պատճառելու համար:

Կարեն Չատիկյանը մեղսագրված արարքների համար իրեն մեղավոր չճանաչեց: Երեւանի ընդհանուր իրավասության դատարանում նա առաջ քաշեց անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցումով արարքներ կատարելու վարկածը:

Մեղադրանքի կողմը պնդեց՝ Չատիկյանի կողմից տուժողներին նպատակաուղղված հարվածներ են հասցվել, ոչ թե դանակն է պատահաբար դիպել տուժողներին. դա հաստատվել է դատաբժշկական փորձաքննության եզրակացություններով: Չի հաստատվել, որ Կարեն Չատիկյանի կյանքին ու առողջությանը տուժողների կողմից իրական վտանգ էր սպառնում:

Երեւանի ընդհանուր իրավասության դատարանը Կարեն Չատիկյանին մեղավոր ճանաչեց քրեական օրենսգրքի 104 հոդվածի 1-ին եւ 113 հոդվածի 1-ին մասերով ու դատապարտեց 10 տարի ազատազրկման:

Գոհար ՔԱԼԱԾՅԱՆ

Ալկոհոլիզմ. Հարի՞ք, թե՞ հիվանդություն

Մասնագետների դիտարկմամբ՝ ալկոհոլը բացասական է ազդում մարդու բոլոր օրգանների վրա, սակայն առավել քայքայիչ ազդեցություն է գործում գլխուղեղի վրա: Սպիրտը ներծծվում է արյան մեջ եւ արյան շրջանառության միջոցով հասնում գլխուղեղ, եւ սկսվում է գլխուղեղի բջիջների քայքայում, ինչի արդյունքում գլխուղեղի ծավալը աստիճանաբար փոքրանում է, կեղեւի վրա առաջանում են բորբոքումներ: Ալկոհոլի չարաշահումը շարքից հանում է նաեւ կենտրոնական նյարդային համակարգը, ինչն ազդում է մարդու բնավորության, խոսքի, վարքի վրա:

Ալկոհոլիզմը, սոցիալական լինելով հանդերձ, նպաստում է հանցագործությունների կատարմանը: Հարբած վիճակում մարդը հակված է կատարել հակահասարակական արարքներ, հանցագործություններ, երբ, ընդհակառակը, սթափ վիճակում հանգիստ ու հավասարակշռված է: Այդպիսով ոչ միայն քայքայում է առողջությունը, այլեւ վտանգավոր է դառնում հասարակության, ընտանիքի, շրջապատի համար:

Մասնավորապես, խուլիգանության եւ մարմնական վնասվածք հասցնելու դեպքերի մեծ մասը ալկոհոլի ազդեցության հետեւանք են: Հանցանքը կատարելիս հարբածը չի էլ մտածում հետեւանքների մասին, նա իր արածը գիտակցում է ժամեր, նույնիսկ՝ օրեր անց, եւ թյուրիմացաբար մտածում է, որ հարբած լինելը մեղմացուցիչ հանգամանք է: Մինչդեռ քրեական օրենսգրքի 27 հոդվածի համաձայն՝ հարբած վիճակում հանցագործություն կատարած անձը քրեական պատասխանատվությունից չի ազատվում: Իսկ ըստ քրեական օրենսգրքի 63 հոդվածի՝ հարբած վիճակում հանցագործություն կատարելը դիտվում է որպես պատիժը ծանրացնող հանգամանք:

Որովայնի եւ կրծքավանդակի կտրած-ծակած վերքով հիվանդանոց էին տեղափոխվել երեք երիտասարդ:

Չեռնարկված օպերատիվ-հետախուզական եւ քննչական միջոցառումների շնորհիվ պարզվեց, որ նրանք վնասվածքները ստացել էին դպրոցի մոտ տեղի ունեցած վիճաբանության ժամանակ: Պարզվեց նաեւ, որ երիտասարդներին դանակահարել էին Գեւորգ Պողոսյանն ու Հովհաննես Սարգսյանը: Ոստիկանների բացատրական աշխատանքների շնորհիվ նրանք ներկայացան ոստիկանության Մալաթիայի բաժին: Խոստովանեցին ու նաեւ փորձեցին մեղքը բարդել... մի քանի բաժակ օղու վրա: Իբր խմած չլինեին՝ նման բան չէին անի:

Գողության կասկածանքով ոստիկանություն բերման ենթարկված գյումրեցի Տիգրան Միքայելյանը եւս «արդարացում» ուներ: Մի քանի բաժակ օղի էր խմել ու գնացել նախկին կնոջ տուն՝ որդուն տեսակցելու: Կինը նրան 4-ամյա որդու հետ մենակ էր թողել ու գնացել իր գործերով: Տիգրանն էլ օգտվելով ընձեռված հնարավորությունից՝ ննջասենյակի պահարանից գողացել էր ոսկյա զարդերը, հինգ հարյուր դոլար ու հրաժեշտ էր տվել որդուն...

«Հարբած չլինեի՝ նման բան չէի անի, էդքան անխելք չեմ»՝ սա էլ «արդարացումը»:

Ալկոհոլը նպաստող գործոն է ճանապարհատրանսպորտային պատահարների համար: Վիճակագրություն կա, ըստ որի՝ մահացու ելքով ճանապարհատրանսպորտային պատահարների հիմնական մեղավորները հարբած վարորդներն են:

Նոյեմբերի 8-ին «ՎԱԶ-2106» մակնիշի մեքենան Վանաձորի Զորավոր Անդրանիկի փողոցում բախվեց ճամփեզրին կայանած «Նիսան»-ին: Ծայրահեղ ծանր վիճակում հիվանդանոց տեղափոխված «ՎԱԶ-2106»-ի 34-ամյա վարորդը ալկոհոլի ազդեցության տակ էր: Նույն օրը, արդեն մայրաքաղաքում, Մյասնիկյան պողոտայում իրար բախվեցին «ԲՄՎ» եւ «Ֆոլքսվագեն» մակնիշի մեքենաներ: «ԲՄՎ»-ի վարորդը ոչ սթափ վիճակում էր. նա, երկու ուղեւորները եւ «Ֆոլքսվագեն»-ի վարորդը տեղափոխվեցին հիվանդանոց: Ուղեւորներից մեկը հիվանդանոցում մահացավ:

Նախորդ օրը Երեւան-Գյումրի ճանապարհին «Օպել Վեկտրա» մակնիշի մեքենան դուրս գալով երթեւեկելի գոտուց՝ կողաշրջվեց. ուղեւորը մահացավ, իսկ մարմնական վնասվածքներ ստացած վարորդը տեղափոխվեց հիվանդանոց: Նա մեքենան վարել էր ալկոհոլ օգտագործած վիճակում:

Ալկոհոլային խմիչք օգտագործում են գրեթե բոլորը, բայց ոչ բոլորն են դառնում հարբեցող: Ամեն ինչ չափի մեջ է գեղեցիկ:

Հրապարակումը, թերեւս, արդիական է նաեւ մեկ այլ առումով՝ Ամանորի տոներն են մոտենում...

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Հապշտապ ենթադրության հետեւանքը

Գեղարքունիքի մարզի գյուղերից մեկի երկու բնակիչների վեճի պատճառը կասկածն էր: Կասկածի թիրախում հայտնվածը կասկածողի եղբոր կինն էր, ում «սիրային կապն» էր բացահայտել հարեւանի հետ: Իհարկե, եղբոր կնոջը հարեւանի հետ չէր բռնացրել, ոչ էլ ականատես էր եղել նրանց կասկածելի վարքագծին, պարզապես եղբոր կնոջ հեռախոսի մեջ ձայնագրություն էր լսել:

Բջջային հեռախոսը անհատական սարք է, ու այն քչփորելը աննորելի է: Տղամարդը տվյալ դեպքում պնդում է, թե ընդամենը ցանկացել է երաժշտություն լսել եւ պատահաբար է բացվել ձայնագրությունը, որի մեջ եղբոր կինն իր եղբոր կնոջ հետ զրուցելիս հիշատակում էր նաեւ հարեւանին, նրա ընտանիքի բացակայության մասին, որ գնալու է նրա տուն կերակրելու: Սա բավական էր, որ հապշտապ ենթադրություն աներ, որ խոսքը սիրային կապի մասին է:

Եթե նա մեկ անգամ եւս ձայնագրությունը լսեր, ապա կկռահեր, որ խոսքը անասուններին կերակրելու մասին է, եւ ո՛չ ինքն անհիմն փոքրիկ կապրեր, ո՛չ հարեւանի համար փոքրիկ կբարձրացներ՝ նրանից պարզաբանում պահանջելով, ավելին՝ հայտարարելով, թե ապացույցներ ունի:

Ի պատասխան՝ հարեւանն իրեն վարկաբեկողին բռնցքահարել էր: Վեճն, իհարկե, սրանով ավարտվել էր, բայց տուն գալով եւ աչքի կապտուկը տեսնելով՝ «պատվախնդիրը» դիմել էր ոստիկանություն: Բայց հետո երկրորդ անգամ էր լսել կանանց խոսակցության ձայնագրությունն ու համոզվել, որ կասկածներն անհիմն են, ոչ միայն բողոքը պնդելուց էր հրաժարվել, այլեւ հարեւանից էր ներողություն խնդրել:

Ռիտա ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Հափշտակողներից մեկը հայտնաբերվել է

Դեկտեմբերի լույս 3-ի գիշերը երկու տղամարդ երկաթե ձողով բացել էին Երեւանի Տիգրան Մեծի պողոտայում գործող բջջային օպերատորներից մեկի սրահի դուռը եւ հափշտակել հեռախոսներ: Սպասարկման սրահի անվտանգության ձայնազդանշանային համակարգի շնորհիվ աշխատակիցները նույն վայրկյանին տեղեկացել էին կատարվածի մասին ու ահազանգել ոստիկանության Երեւան քաղաքի վարչության օպերատիվ կառավարման կենտրոն: Ահազանգը տարածքային ենթակայության կարգով փոխանցվել էր ոստիկանության Էրեբունու բաժին: Բաժնի քրեական հետախույզներն էլ, բառի բուն իմաստով, լծվել էին հանցագործության բացահայտման գործին:

Բջջայինները հափշտակողների դեմքերը հստակ չէին երեւում: Տեսագրությունները, ճիշտ է, ապացուցողական նշանակություն ունեն, բայց տվյալ դեպքում բացահայտմանը չնպաստեցին: Սակայն օրեր տեւած տարաբնույթ միջոցառումները, այդ թվում՝ գիշերային քողարկված ծառայությունն ու դարանակալումները, արդյունք տվեցին: Քրեական հետախույզները նախ պարզեցին, որ գողությունը կատարող անձինք դեպքի վայր էին եկել «Օպել» մակնիշի մեքենայով: Պարզեցին վարորդի ինքնությունը, որին, գողություն կատարելու կասկածանքով, բերման ենթարկեցին ոստիկանության Էրեբունու բաժին:

53-ամյա ենոք Վարդանյանը բերման ենթարկվելուց հետո ներկայացվեց Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժին: Նախաքննական մարմնում տված ցուցմունքում հայտնել է, որ հեռախոսները 400 հազար դրամով վաճառել է մի անծանոթ բեռնատարի վարորդի:

Ձեռնարկվում են օպերատիվ-հետախուզական ու քննչական գործողություններ՝ բջջային հեռախոսները գողացած մյուս անձի ինքնությունը պարզելու, նրան եւ վաճառված գողոնը հայտնաբերելու ուղղությամբ:

Նախաքննությունը շարունակվում է:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Թմրանյութ՝ սպահանջ

Սկիզբը՝ էջ 1

Թմրանյութ տեղափոխողի դերում, գործի բերումով, հաճախ հայտնվում են տաքսու վարորդները:

Անդրադառնաք վերջին դեպքերին:

Մինաս Մանուկյան անուն-ազգանունով տաքսիստը բռնվեց «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում: Նրա մոտից հայտնաբերվածը բուպրենորֆին էր: Գնացել էր դատապարտված ընկերոջը տեսակցելու: Քրեակատարողական հիմնարկի աշխատակիցները, սահմանված կարգի համաձայն, զննել էին եւ կիսագուլպայի մեջ հայտնաբերել կպչուն ժապավենով փաթեթավորված հաբերը:

Կարեն Մարտիրոսյան անուն-ազգանունով մեկն էլ բերման ենթարկվեց «Հրազդան» քրեակատարողական հիմնարկի մոտից: Անձնական խուզարկությամբ նրա մոտից հայտնաբերվեց բուպրենորֆին ու կոկաին: Որքան էլ փորձեց թաքցնել ճշմարտությունը՝ չհաջողվեց: Գիշերվա ուշ ժամին քրեակատարողական հիմնարկի մոտ էր հայտնվել հաբերն ու սպիտակավուն փոշենման զանգվածը դատապարտյալ ընկերներին հասցնելու համար:

Արամ անունով մի տաքսիստ բերման ենթարկվեց «Հրազդան» քրեակատարողական հիմնարկից: Կասկածանքը՝ թմրանյութի տեղափոխում: Ոստիկանությունում փորձեց արդարանալ՝ իբր տեղյակ չէր, որ իրեն հանձնված ծանրոցում թմրանյութ կա, որ չի ճանաչում կալանավորին, որի համար հասել էր Հրազդան: Իրականությունն, ինչ խոսք, կպարզվի քննությամբ:

Ռուդիկ Սահակյան անուն-ազգանունով մեկն էլ բերման ենթարկվեց մինչեւ քրեակատարողական հիմնարկ հասնելը: Նրա մոտից հայտնաբերվածը սուբուտեքս էր: Առաջին հայացքից թվում էր՝ տոպրակում կասկածելի ոչինչ չկար՝ մի քանի տուփ ծխախոտ, ներքնաշոր, օճառահեղուկ, քաղցրավենիք: Բայց օճառահեղուկի միջից հայտնաբերվեցին պոլիէթիլենային թաղանթով փաթեթավորված դեղահաբեր: Ըստ Ռուդիկ Սահակյանի՝ հանձնուքը վերցրել էր Դավիթաշեն թաղամասում՝ անծանոթ քաղաքացուց: Քննությամբ, սակայն, պարզվեց, որ քրեակատարողական հիմնարկում գտնվող հարեւանի համար էր տանում նրա կնոջ խնդրանքով:

Սասուն Հակոբյան անուն-ազգանունով մի տաքսիստ էլ բերման ենթարկվեց ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին: Քրեակատարողական հիմնարկում պատիժը կրող Յուրա Ափոյանի ցուցումով իր վարած տաքսիով հասել էր Ուլնեցու փողոցի շենքերից մեկի մոտ, Յուրայի կնոջից վերցրել էր հանձնուքը, բայց տեղ հասցնել չկարողացավ: Իրացնելով օպերատիվ տվյալները՝ քրեական հետախույզները փակեցին նրա ճամփան...

Մեկանգամյա օգտագործման թեյի փաթեթներից հայտնաբերվածը մարիխուանա էր, իսկ «Ջերմուկ»-ի 22ի մեջ լցված եւ ծիրանի հյութ հիշեցնող հեղուկը դիազեպամ հոգեմետ դեղերի լուծույթ էր:

Իրացնելով օպերատիվ տվյալները՝ ոստիկանության Կոտայքի մարզի աշխատակիցները «Կոշ» քրեակատարողական հիմնարկի մոտից բերման ենթարկեցին 55-ամյա մի կնոջ: Ամուսնուն հասցեագրված հանձնուքում հայտնաբերվեցին սուբուտեքսի երկու հարյուրից ավելի հաբեր:

Օրինակները շատ են. սահմանափակվենք այսքանով: Իսկ վերջում հավելենք՝ ճիշտ է, իրավապահները փորձում են կանխել այսօրինակ «բարեգործությունները», բայց քաղաքացու գիտակից զգուշավորությունը կանխարգելիչ լավագույն տարբերակն է:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

«Բնակարանի հանքույթ»

Սմբատ Սերոբյանն ու Գեւորգ Հակոբյանն ընկերներ են: Նրանց իրար կապող մի շարք պատճառներից, թերեւս, առաջնայինը նախասիրությունն է: Քառասունվեցամյա այս տղամարդիկ թմրամոլ են, ու երբ «կարիքը» խեղդում է, միասին թմրանյութ են գործածում:

Այդպիսի կարիքի մեջ էին նաեւ նոյեմբերի 17-ին: Առավոտյան աշխատանքի գնալուց առաջ Սմբատը զանգեց Գեւորգին ու ասաց, որ լավ չի զգում: Ընկերն ընկերոջ «ցավը» հասկացավ կես խոսքից. ինքն էլ այդ պահին «լավ չէր զգում»:

Հարցերի հարցը՝ թմրամիջոց ճարելը, Գեւորգն իր վրա վերցրեց ու ընկերոջը հրավիրեց իր տուն:

Սմբատն իրեն մի ժամով «ազատեց» աշխատանքից ու շտապեց Մալյան փողոց՝ Գեւորգի տուն: Նա էլ նրանից վերցնելով քսան հազար դրամ՝ գնաց «ապրանքի» հետեւից: Կես ժամ անց ափիոնն ու անհիդրիդն իրենցն էին. պատրաստեցին թմրանյութն ու ներարկվեցին:

Որոշ ժամանակ «հաճույքի» թեւերով «թափառելուց» հետո Սմբատը հիշեց, որ ոչ միայն ինքը, այլեւ ընտանիքը եւս լավ զգալու կարիք ունի: Թմրամիջոցի չօգտագործած չափաբաժինն ու ներարկիչը գրպանը դրեց, հրաժեշտ տվեց ընկերոջն ու շտապեց գործատեղ:

Բայց ճանապարհը «կտրեցին» ոստիկանության Նոր Նորքի բաժնի աշխատակիցներն ու, թմրանյութ օգտագործելու, պահելու, իրացնելու կասկածանքով, բերման ենթարկեցին ոստիկանություն, որտեղ անձնական խուզարկությամբ նրա մոտից հայտնաբերվեց թմրամիջոցը:

Սմբատ Սերոբյանը ոչ միայն խոստովանեց թմրամոլ լինելը, այլեւ մատնանշեց, թե որպեսզի առաջ որտեղ եւ ում հետ էր թմրամիջոց գործածել: Հետո արդեն ոստիկանությունում հայտնվեց գողության համար նախկինում երկու անգամ դատապարտված Գեւորգ Հակոբյանը: Նա արդեն մատնանշեց թմրանյութի հայթայթման աղբյուրը:

Ոստիկանություն բերման ենթարկվեց նաեւ Ավան թաղամասի բնակիչ Սարգիս Սարգսյանը՝ թմրամիջոցի մատակարարը:

Փաստով հարուցված քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀՀ ոստիկանության քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մշտական մրցութային հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) հայտարարում է մրցույթ՝ ՀՀ ոստիկանության քաղաքացիական հատուկ ծառայության հետեւյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

Անձնագրային եւ վիզաների վարչության բնակչության պետական ռեգիստրի վարման եւ սպասարկման բաժնի (այսուհետ՝ Բաժին) առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 03-Հ-3.2-358):

Ապահովում է Վարչության, տարածքային անձնագրային եւ տեղական ռեգիստրի ծառայությունների համակարգչային եւ հատուկ տեխնիկայի անխափան աշխատանքը, վերացնում անսարքությունները, վարում է անձնագրային ծառայություններից ստացված տեխնիկական անսարքությունների վերաբերյալ հաղորդումների հաշվառումը, ապահովում է տվյալների հիմնապահեստների ամբողջականությունը, ճշտությունը, կատարում է նոր ստացված ինֆորմացիայի արխիվացում, կատարում է հատուկ հաշվառման տվյալների բազաների վարում, ինչպես եւ համակարգչի միջոցով հատուկ հաշվառման եւ անձնագրային տվյալների ստուգումներ, սպասարկում եւ համակարգում է տեղական ռեգիստրների գործունեությունը, ղեկավարության ցուցումով համակարգիչ է ներմուծում քաղաքացիների անհատական հաշվառման տվյալներ, մշակում, արխիվացնում, կատարում ճշգրտված տվյալների կրկնակի ստուգում:

Իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Մրցույթը կկայանա 01.02.2019 թ. ժամը 10.00-ին, ՀՀ ոստիկանության շենքում՝ ք. Երեւան, Նալբանդյան 130:

Թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն կրթություն, քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոններում կամ քաղաքացիական ծառայության կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ ՀՀ համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների եւ ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ,
- նշված պաշտոնի անձնագրում նշված լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես եւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,
- համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը՝

- գրավոր դիմում (տրվում է Հանձնաժողովի անունով՝ նշելով այն պաշտոնը, որին հավակնում է դիմորդը),
- քաղաքացիական հատուկ ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները՝ բնօրինակների հետ,
- տեղեկանք այն մասին, որ իր մոտ առկա չէ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի «Հանրային ծառայության պաշտոնի նշանակվելու դեպքում լիազորությունների իրականացմանը, ինչպես եւ ուսումնական հաստատություններում մանկավարժական կամ վարչական գործունեությանը խոչընդոտող հիվանդությունների ցանկը հաստատելու եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 27-ի N 908-Ն եւ 2005 թվականի մարտի 3-ի N 310-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1801-Ն որոշմամբ հաստատված հավելվածում ընդգրկված հիվանդություններից որեւէ մեկը,
- հայտարարություն այն մասին, որ ապագա աշխատանքը կապված չէ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր եւ քույր) քաղաքացիական ծառայողի նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ,
- հայտարարություն՝ տվյալ պաշտոնի անձնագրով պահանջվող օտար լեզվի (լեզուների) տիրապետելու մասին,
- հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
- հայտարարություն այն մասին, որ ինքը չի դատապարտվել հանցագործության համար, կամ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված է,
- արական սեռի անձինք ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին,
- 2 լուսանկար՝ 3 x 4 սմ չափսի,
- անձնագրի պատճենը:

ՀՀ քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր (նույնականացման քարտ):

Փաստաթղթերն ընդունվում են միայն աշխատանքային օրերին՝ ժամը 9.30-ից մինչեւ 12.30-ը:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 18. 01.2019 թ.:

ՀՀ քաղաքացիները ՀՀ ոստիկանությունում քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար կարող են դիմել ՀՀ ոստիկանության կադրային քաղաքականության վարչության քաղաքացիական հատուկ ծառայության անձնակազմի կառավարման բաժին՝ 306 կամ 313 սենյակ:

Հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Երեւան 0025, Նալբանդյան 130:

Հեռ.՝ (011) 52-83-74 (ներքին՝ 54-46), (010) 59-66-85 (ներքին՝ 56-85), (010) 59-64-56 (ներքին՝ 54-56):

Գողություն դիտորդից

Դեկտեմբերի 3-ին ոստիկանության Սյունիքի մարզային վարչության եւ Կապանի բաժնի ծառայողները, իրացնելով օպերատիվ տեղեկությունները, բերման ենթարկեցին 39-ամյա Գեւորգ Գեւորգյանին: Նա կասկածվում էր դեկտեմբերի 2-ին միջազգային դիտորդական կազմակերպության անդամի համակարգիչը գողանալու մեջ:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումներով ոստիկաններին հաջողվեց պարզել, որ Գեւորգ Գեւորգյանն օգտվելով դիտորդի՝ վարձակալած բնակարանից կարճատեւ բացակայությունից՝ մտել էր տուն ու գողացել դյուրակիր համակարգիչը:

Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

«Նեսոյի ...»
... Աբովյան
Ծաղիկ / ... Ելցին
Չինգիզ, Բաթու / Ազգություն, Ասիա
Պնդուկ, նուշ
Եգիպտ. նկարիչ
Կերպար
Պլեբեյ / Իսպան. ճարտարապետ
«Օթելլո», գործ. անձ
Հին իսպան. պար / Ամբարված մթերք
Ցուցական դերանուն
Էգ ձի / Սնունդ
Ֆրանսիացի ապագայի գուշակ
Նստվածք բաժակի հատակին
Ուկրաին. բանաստեղծ
Քրիստոնեական տոն
Երգեցիկ թռչուն
Ավստրալ. նավահանգիստ
Անշեն, անբնակ
«Տղամարդը եւ ...ը»
Դարպաս / Աչք
Պիեռ ... / Գրային նշան
Որոգայթ
Միջինասիական գյուղ
Քիմիական տարր / Քաթար
Գետ, Բիրմա / Տաշող գործիք
Բրազիլ. ֆուտբոլիստ
Վոյնիչ
Ընդմիջում / Խորհրդ. ավտոմեք.
Նամակների ժող. / ... նիստ
Վառելանյութ
... Սմիթ / ... Պալաս
Հանցախումբ / Պլյուս
Գավառ, Այրարատ
Գետ, Մոնղոլիա եւ ՌԴ
Շենքի գծագիր / ... աղջիկ
Սաղարթավոր ծառ
Բառակազմութ. տեսակ
Հոգեւորական / Տապ
Քաղաք, Իսպանիա / Քոչվոր ժողովուրդ
Բռնցքամարտի «արքան»
Հանգուցյալ
«Նորմանդիա-...»
Մայրիկ / Արգենտին. նահանգ
Աշակերտ / Ցանցառ
... Ֆիլիպ / Թեք, կոր
Կիսալուսին / «Վիճակը նետված է. անցնել ...ը»
Թաց / Նապոլեոնյան մարշալ
Իսլանդ. արձակ ասք
Պատերազմի աստված
Գավաթ, ըմպանակ
Հունգար շախմատիստ
Պոչավոր երկկենցաղ
Շահույթ / ... Ռոդնինա
Դրոշմելու իր
Սերգեյ ...
Տարածք, Ռուսաստան
Ցանկապատի ձող
Խոշոր մարզադաշտ / 2009 թ. տերը
Բուժանյութ
... կաթին

Մարմնի անզգայացում
Հին հայկ. մ/քաղաք / Ֆրանսիկո ...
Շերխան / Ախոռ
Ասիական կոբրա

Ուշադրություն

Հարգելի քաղաքացիներ՝

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (Էրեբունու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Մզկիթի մոլլա / Ռումբ, արկ
Հայոց Ձեւը
... Խաչատրյան
Հոտավետ նյութ
Դաշտային աշխատանք / Հոմերոս
Գավառ, Այրարատ
Գետ, Մոնղոլիա եւ ՌԴ
Սաղարթավոր ծառ
Բռնցքամարտի «արքան»
Հանգուցյալ
Մայրիկ / Արգենտին. նահանգ
Աշակերտ / Ցանցառ
Թաց / Նապոլեոնյան մարշալ
Իսլանդ. արձակ ասք
Պատերազմի աստված
Հունգար շախմատիստ
Շահույթ / ... Ռոդնինա
Դրոշմելու իր
Խոշոր մարզադաշտ / 2009 թ. տերը
Բուժանյութ
... կաթին

Աստղագուշակ

21.12 - 28.12

Խոյ - Ազատվեք վատ սովորություններից, վատ հիշողություններից, վատ մարդկանցից:

Ցուլ - Անպայման ժամանակ անցկացրեք ընտանիքի հետ, այլապես վեճերն անխուսափելի կլինեն:

Երկվորյակ - Ձեր բնատուր տաղանդը կօգնի դուրս գալ դժվար իրավիճակից:

Խեցգետին - Փորձեք համատեղել ցանկություններն ու հնարավորությունները, այլապես կհայտնվեք կոտրած տաշտակի առաջ:

Առյուծ - Ողջ ուշադրությունը կենտրոնացրել եք սիրելիի վրա. փորձեք ձեզ համար եւս ժամանակ գտնել:

Կույս - Փորձում եք շրջապատի բոլոր կարիքավորներին օգնել. հիշեք՝ չեք կարող աշխարհի բեռը ձեր ուսերին վերցնել:

Կշեռք - Ժամանակն է նոր աշխատանք փնտրել կամ փորձել համակերպվել եղածի հետ:

Կարիճ - Առաջիկա օրերին սիրո խոստովանություն կլսեք, այն էլ՝ շատ գեղեցիկ:

Աղեղնավոր - Պետք չէ սահմանափակվել եղածով, եթե կա հնարավորություն, օգտագործեք:

Այծեղջյուր - Անձնական կյանքը կալեկոծվի, իսկ մեղավորը դուք եք. բավարար ուշադրություն չեք դարձրել խնդիրներին:

Ջրհոս - Անելանելի վիճակում եք հայտնվել. պետք է ընտրություն կատարեք:

Ձուկ - Եղեք պահանջկոտ ձեր, ոչ թե դիմացինների հանդեպ: Ոչ ոք ձեզ պարտական չէ:

Փորձեք լուծել

Խնդիր N1



Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից

Խնդիր N2



Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից

Նախորդ խնդիրների պատասխանները

Խնդիր N1 1.b6-c7 b8:d2 2.c1:e7 x

Խնդիր N2 1. e1-f2 d8:h4 2.f2-g3 h4:f2 3. g1:c1 x

Պատրաստեց
Նշան ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ
Շաշկու Հայաստանի չեմպիոն, IDF վարպետ, սպորտի վարպետ

Նախորդ համարի սկանվորդի պատասխանները



«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աթաբեկյան:
Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 20.12.2018 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 7170:
Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը «02»-ին պարտադիր է:
Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: